

**ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԳՐԻԳՈՐՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ՍԱՄՎԵԼԻ**

**ՍԱԿԱՎԱՇԱՐԺՈՒ ԹՅԱՄԲ և ՈՒՂԵՂԻ ԻՇԵՄԻԿ  
ԽԱՆԳԱՐՈՒ ՄՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ  
ՀԵՄՈԴԻՆԱՄԻԿ և ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ  
ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ԾՏԿՈՒ ՄԸ ՑԻՏԻԿՈԼԻՆՈՎ**

Ժ Դ .00.14 - « դ Ե ղ ա բ ա ն ո ւ թ յ ո ւ ն »

մ ա ս ն ա գ ի տ ո ւ թ յ ա մ բ

դ Ե ղ ա գ ո թ ծ ա կ ա ն գ ի տ ո ւ թ յ ո ւ ն ն Ե թ ի

թ Ե կ ն ա ծ ո ւ ի

գ ի տ ա կ ա ն ա ս տ ի ճ ա ն ի հ ա յ ց մ ա ն

ա տ Ե ն ա խ ո ս ո ւ թ յ ո ւ ն

**Գ ի տ ա կ ա ն ղ Ե կ ա վ ա թ `**

դ Ե ղ ա գ ո թ ծ ա կ ա ն գ ի տ ո ւ թ յ ո ւ ն ն Ե թ ի դ ո կ տ ո թ ,

պ թ ո Ֆ Ե ս ո թ Բ ա լ ա ս ա ն յ ա ն Մ .Գ .

# Ե Ր Ե Վ Ա Ն 2019

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հասպալու մետրի ցանկ .....	4
Ն Ե Ր Ա Ճ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն .....	6
Գ Լ Ո Լ Խ 1.Գ Ր Ա Կ Ա Ն Ո Լ Թ Յ Ա Ն Ա Կ Ն Ա Ր Կ .....	11
1.1. Ուղեղային հյուսվածքի իշեմիկ վնասման դեղաբանական շտկման ուղիները .....	11
1.2. Ասկալսչ պոժուլայ ու կը՝ որսբս ուղեղի սոյ ան շրջանառուլայ ան խանգսրու մետրի գսրգսցման ռիսկի գործոն .....	27
1.3. Տիսիկոլ ինկի կո սոդսսսչ սոսն սզդեցուլայ ու կը և դրահնսրսսլոր մեխանիզմները .....	33
Գ Լ Ո Ւ Խ 2.Հ Ե Տ Ա 2 Ո Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Ն Յ Ո Ւ Թ Ե Ր Ը Ե Վ Ս Ե Թ Ո Դ Ն Ե Ր Ը .....	47
2.1 Տեղային իշեմիկ մոդել սսլորու մ հսրու ցված միջին ուղեղային գսրկերակի կսսրու մոլ .....	47
2.2. Ասկալսչ պոժուլայ ան վործսրսրսկան մոդել սսլորու մ .....	51
2.4 Անետների գլխուղեղի կերկի սեղային սոյ ան շրջանառուլայ ան գնսսսսու մ կ սզեր-դոսլ եր հոսքսլ սսլուլայ սսլ .....	52
2.5 Անետների հսնսկսրգայ ին գսրկերակայ ին ճշման հետսզոսու մ կ «Tail-cuff» ոչ ինվսզիվ մեթոդ .....	55
2.6. Անետների վսրքի ու սու մսսսիրուլայ ու կը «բսց դսչ ս» թեսու մ .....	57
2.7. Անետների վսրքի ու սու մսսսիրուլայ ու կը «Բսրծրսցված խսչ անման կ սբիրիկոս» թեսու մ .....	59
2.8. Անետների հիշողուլայ ան և ու սու ցման գործընթացների ու սու մսսսիրու մ կ «Պսսիվ իսու սսիմն սոյ մնսկան ռեֆլեքս» թեսսի օգնուլայ սսլ (ՊԻՄ) .....	61
2.9. Անետների շսրժողսկան կորորիկսցիկ գնսսսու մ կ սսրոլոր ձողի վրս .....	62
2.10. Անետների գլխուղեղի հյուսվածքու մ .....	63
կ իսրֆու սցինի քնսկսկան որոշ ու մ կ .....	63
2.11. ԳԱԹի քնսկսկան որոշ ու մ կ գլխուղեղու մ .....	65
2.12 Անետների գլխուղեղի մորֆոլ ոգիսկան հետսզոսուլայ ու կը .....	68
2.13. Ասոցված սոյ ու կքների վիճսկսգրսկան մշսկու մ .....	70
Գ Լ Ո Ւ Խ 3.Հ Ե Տ Ա 2 Ո Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Ա Ր Դ Յ Ո Ւ Ն Թ Ն Ե Ր Ը և Դ Ր Ա Ն Ց Թ Ն Ն Ա Ր Կ Ո Ւ Մ Ը .....	72

3.1. Տիտիկոլ ինի ազդեցութեան գնահատումը առևտրային ուղեգրային պայմանադրման շրջանառութեան վրա միջին ուղեգրային զարկերակի կապման և սակավաշարժութեան ապր մանկերու մ.....	72
3.3. Լոկալ իշխման ու և հիսթրիկնեզիայ ու մակաճված վարքային վոլոյիտութեան ու նմանի շտկումը ցիտիկոլ ինով.....	96
3.3.1. Տիտիկոլ ինի ազդեցութեան ու նրա գլխուղեղի իշխման ու մակաճված տափնապի զարգացման վրա	97
3.3.2. Տիտիկոլ ինի ազդեցութեան ու նրա գլխուղեղի և քրոնիկ իշխման ու հարուցված առևտրային շարժումային կորորդինացիայի խանգարումների վրա.....	106
3.3.3. Տիտիկոլ ինի ազդեցութեան ու նրա առևտրային հիշողութեան և ուսուցման գործընթացների վրա միջին ուղեգրային զարկերակի կապման և սակավաշարժութեան ապր մանկերու մ.....	110
3.5. Սակավաշարժութեան ապր մանկերու մ ուղեգրային հյ ու սվաճքու մ ԳԱԹի քանակական սերտաշարժերը ցիտիկոլ ինի ազդեցութեան վրա.....	120
Ա Մ Փ Ո Փ Ո Ի Մ .....	125
Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Յ Ա Ն Ց Ա Ն Կ .....	137

## Հապավորումները

- ՑԴՖ-խոլիստերոլ** - ցիտիդին-5-դիֆոսֆոխոլիստերոլ
- ՄՈՒԶԿ** - միջին ուղեղային զարկերակի կապում
- Ն/ո** - ներորոկայնային
- ՏՈԼԱ** - տեղային ուղեղային արյունահոսք
- ՍՃ** - սիստոլիկ ճնշում
- ԴՃ** - դիաստոլիկ ճնշում
- ՄՃ** - միջին զարկերակային ճնշում
- ՍԶՀ** - սրտի զարկերի հաճախականություն
- ԶՃ** - զարկերակային ճնշում
- ԲԽԼ** - բարձրացված խաչածուլաբիրինոս
- ՊԽՊՌ** - պասիվ խոլեստերոլ պայմանական ռեֆլեքս
- ԼՀ** - լուսածորման հաճախականություն
- ԳԱԿԹ** - գամմա-ամինակարաթթու
- ԲԱՀՔ** - բարձրարդյունավետություն  
հեղուկային քրոմատագրում
- ՈԼՁ** - ուլտրաձայնային
- Լ** - luxol fast blue
- ՀԿ** - հիպոկիստիա
- ՈԼԱՇ** - ուղեղային արյան շրջանառություն
- ԱԸՔԶ** - աջ ընդհանուր քնային զարկերակ
- ՍՇ** - սակավաշարժություն
- Հ/Է** - հեմատոքսիլին-էնզիմ
- Срu** - Caudate-putamen complex
- ԳՔ** - Globus pallidus
- ԸՇԱ** - ընդհանուր շարժողական ակտիվություն

**ՏՅՄ** - ֆլյունորեսցենցիայի ինտենսիվություն հարաբերական միավոր

**ԱՌ** - ազատ ռադիկալներ

**ՍՕԴ** - սուպերօքսիդի սմոլտազ

**ԿԼՅ** - կենտրոնական նյարդային համակարգ

**Par1** - parietal cortex area 1

**Cg1** - cingulate cortex area 1

## Ն Ե Ր Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### Թ Ե Մ Ա Յ Ի Ա Ր Դ Ի Ա կ Ա Ն Ո Լ Թ Յ Ո Լ Ն Ը

Հայ տնի է, որ ուղեղի արյան շրջանառության խանգարումները և կաթվածի զարգացման համար, որն այսօր հանդիսանում է երկրագնդի բնակչության մահացության երկրորդ և հաշմանդամության առաջին պատճառը (Heart Disease and Stroke Statistics-2017 Update, A Report From the American Heart Association), կարևորագույն ռիսկի գործոն է հանդիսանում սակավաշարժ ապրելակերպը:

Վերջին մոտ 30 տարիների ընթացքում ալադեմիկոս Վ.Պ. Հակոբյանի գլխավորությամբ \$արմակոլոգիայի ամբիոնում կատարված հետազոտությունները՝ ներառյալ ուղեղի արյան շրջանառության (Акопян В.П., 1999), կառուցվածքային (Балаян А.С., 2002), NO-սինթազայի (Баласанян М.Г., 2003; Ашрафян К.Б., 2006), կալցիոնի փոխանակության (Мелконян К.В. и соавт., 1997), ազատ ռադիկալների (ԱՌ) (Манукян А.А., 2003), ներրոակտիվ ամինաթթուների փոփոխությունները (Манукян А.А., 2003; Погосян В.А., 2011), հայտնաբերել են, որ հիպոկիսեդիայի պայմաններում ուղեղային հյուսվածքում գրանցվում են քրոնիկ իշեմիզացմանը բնորոշ պաթոմորֆոլոգիական, ֆիզիոլոգիական և նյութափոխանակային տեղաշարժեր:

Ներկայումս շատ ինտենսիվ զարգացող առողջ մարդու \$արմակոլոգիայի բնագավառում առանձնակի ուշադրություն է գրավում սակավաշարժ ապրելակերպով պայմանավորված տեղաշարժերի՝ այդ թվում ուղեղային արյան շրջանառության խանգարումները և դրանց հետևանքների դեղաբանական համուղղումը: Ընդ որում, առավել հետաքրքրություն են

ն երկայ աց ն ու մ ա յ ն մի ա գ ու թ յ ու ն ն եր ը , ո Ր ո ն ք ի Ր ե ն ց կ առ ու ց վ ա ծ ք ո վ մ ո տ ե ն է ն դ ո գ ե ն ն յ ու թ ե Ր ի ն և ն ա ս ս տ ու մ ե ն ս ա կ ա վ ա շ ա Ր ժ ու թ յ ա ն պ ա յ մ ա ն ն ե Ր ու մ զ ա Ր գ ա ց ո ղ փ ո փ ո խ ու թ յ ու ն ն ե Ր ի շ տ կ մ ա ն ը ` ա զ դ ե լ ո վ ո Ր պ ե ս հ ա կ ա օ ք ս ի դ ա ն տ ա յ ի ն , ն յ ու թ ա փ ո խ ա ն ա կ ու թ յ ու ն ը կ ա Ր գ ա վ ո Ր ո ղ և ա Ր յ ու ն ա հ ո ս ք ը ք ա Ր ե լ ա վ ո ղ մ ի ջ ո ց ն ե Ր ` զ ու Ր կ ա Ր տ ա հ ա յ տ վ ա ծ կ ո ղ մ ն ա կ ի ա զ դ ե ց ու թ յ ու ն ն ե Ր ի ց : Ն շ վ ա ծ մ ի ա գ ու թ յ ու ն ն ե Ր ի կ ի Ր առ ու մ ը հ ա տ կ ա պ ե ս ա Ր ժ ե վ ո Ր վ ու մ է հ ա շ վ ի առ ն ե լ ո վ ի շ ե մ ի կ խ ա ն զ ա Ր ու մ ն ե Ր ի զ ա Ր գ ա ց մ ա ն մ ե խ ա ն ի զ մ ն ե Ր ի ժ ա մ ա ն ա կ ա կ ի ց պ ա տ կ ե Ր ա ց ու մ ն ե Ր ի վ Ր ա կ ի Ր առ վ ո ղ պ ո տ ե ն ց ի ա լ -կ ա խ յ ա լ Ca-ա կ ա ն մ ղ ա ն ց ք ն ե Ր ի ն ե Ր հ ա կ ո Ր դ ն ե Ր ի , գ լ ու տ ա մ ա տ ա յ ի ն է ք ս ա յ տ ո տ ո ք ս ի կ ա կ ա ն ու թ յ ու ն ը ը ն կ ճ ո ղ ն ե Ր ի , զ ա մ մ ա -ա մ ի ն ա կ ա Ր ա գ ա թ թ վ ի (Գ Ա Կ Թ) ա գ ո ն ի ս տ ն ե Ր ի , գ լ ի ց ի ն ի , ռ ե կ ո մ ք ի ն ա ն տ հ յ ու ս վ ա ծ ք ա յ ի ն պ լ ա զ մ ի ն ո գ ե ն ի խ թ ա ն ի չ ի (rt-PA) և ա յ լ մ ի ջ ո ց ն ե Ր ի ց ու ց ա ք ե Ր ա ծ ո չ ք ա վ ա Ր ա Ր կ լ ի ն ի կ ա կ ա ն ա Ր դ յ ու ն ա վ ե տ ու թ յ ու ն ը :

Ի ն չ պ ե ս վ կ ա յ ու մ ե ն կ լ ի ն ի կ ա կ ա ն փ ո Ր ճ ա Ր կ ու մ ն ե Ր ի ա Ր դ յ ու ն ք ն ե Ր ը հ ա մ ե մ ա տ ա ք ա Ր ա Ր դ յ ու ն ա վ ե տ ե ն Գ Ա Կ Թ-ի ա գ ո ն ի ս տ ն ե Ր ը և հ ա կ ա օ ք ս ի դ ա ն տ ա յ ի ն , թ ա ղ ա ն թ ա պ ա շ տ պ ա ն հ ա տ կ ու թ յ ու ն ն ե Ր ո վ օ ժ տ վ ա ծ մ ի ա գ ու թ յ ու ն ն ե Ր ը : Ս Ր ա ն ց թ վ ի ն է պ ա տ կ ա ն ու մ ց ի տ ի կ ո լ ի ն ը , ո Ր ը մ ի շ ա Ր ք ե վ Ր ո պ ա կ ա ն ե Ր կ Ր ն ե Ր ու մ հ ա մ ա Ր վ ու մ է ե Ր կ Ր ո Ր դ ա յ ի ն ն ե յ Ր ո պ Ր ո տ ե կ ց ի ա յ ի հ ի մ ն ա կ ա ն մ ի ջ ո ց ը (Martynov M.Y. and Gusev E.I., 2015):

Ե լ ն ե լ ո վ վ ե Ր ո ն շ յ ա լ ի ց , ս ա կ ա վ ա շ ա Ր ժ ու թ յ ա մ ք (Ս Ճ) պ ա յ մ ա ն ա վ ո Ր վ ա ծ ու ղ ե ղ ա յ ի ն ա Ր յ ա ն շ Ր ջ ա ն առ ու թ յ ա ն խ ա ն զ ա Ր ու մ ն ե Ր ի և դ Ր ա ն ի ց ք խ ո ղ տ ե ղ ա շ ա Ր ժ ե Ր ի դ ե ղ ա ք ա ն ա կ ա ն հ ա մ ու ղ ղ մ ա ն ն պ ա տ ա կ ո վ մ ե Ր ը ն տ Ր ու թ յ ու ն ը կ ա ն գ առ ա վ ց ի տ ի կ ո լ ի ն ի (ց ի տ ի դ ի ն -5-դ ի ֆ ո ս ֆ ո խ ո լ ի ն ) վ Ր ա :

Հանդիսանալով բնական էնդոգեն նուկլեոգիդայն օրգանիզմում տրոհվելով առաջացնում է ցիտիդին և խոլին՝ խթանելով \$n\$ \$ \$ատիդիլ խոլինի (Grieb P., 2014) և ացետիլ խոլինի սինթեզը (Tayebati S.K. and Amenta F., 2013): Ցիտիկոլինը օժտված է նյարդապաշտպան, հակաօքսիդանտային, բջջի էներգետիկ փոխանակությունը խթանող, նոոտրոպ հատկություններով (Overgaard K., 2014), որոնք կարող են ուղղված լինել սակավաշարժության պայմաններում ուղեղի քրոնիկ իշեմիզացմամբ հարուցված փոփոխություններին շտկմանը:

### **Հետազոտության նպատակը և խնդիրները**

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ցիտիկոլինի ազդեցությունը սակավաշարժության պայմանավորված հեմոդինամիկական և վարքագծային տեղաշարժերի վրա՝ համեմատելով ուղեղի լույսի իշեմիկ խանգարումներով հարուցված նմանատիպ փոփոխություններին հետ: Աշխատանքի նպատակը իրականացնելու համար ուսումնասիրվել է ցիտիկոլինի ազդեցությունը առնետների.

1. ուղեղային հյուսվածքի տեղային արյան շրջանառության վրա՝ սակավաշարժության և աջ ընդհանուր քնային զարկերակի (ԱԸՔԶ) կապման պայմաններում,
2. համակարգային զարկերակային ճնշման և սրտի կծկումների հաճախականության վրա,
3. հիշողության և ուսուցման գործընթացի, շարժողական կոորդինացիայի փոփոխություններին և իշեմիկ փոփոխություններով պայմանավորված տագնապի զարգացման վրա,
4. հիպոկլինեզիայով մակածված լիպոֆոսֆոլիպոսի քանակական տեղաշարժերի վրա,



5. սակավաշարժուն թյամբ պայմանավորված ԳԱԿԹ-ի քանակական տեղաշարժերի վրա,
6. գլխունդեղի հյուսվածքի մորֆոլոգիական փոփոխություններն են:

### **Գիտական նորություն**

Յայտնաբերվել է, որ ցիտիկոլինը կանխում է սակավաշարժուն թյամբ պայմանավորված .

- կենդանիների հիշողության և ուսուցման գործընթացների խանգարումները, տագնապի զարգացումը, շարժողական կոորդինացիայի խաթարումը, ինչպես նաև բարելավում է ուղեղային հյուսվածքի տեղային արյունահոսքը,
- ուղեղային հյուսվածքում էնդոֆոսֆոլիպի քանակական աճը,
- ԳԱԿԹ-ի պարունակության քանակական տեղաշարժերը,
- ուղեղային հյուսվածքի կառուցվածքը պահպանելու ունակությունը հիպոկիսեզիայի պայմաններում:

Բացահայտվել է, որ ցիտիկոլինի ուղեղային հյուսվածքի արյունամատակարարումը, նյութափոխանակությունը և կառուցվածքը շտկելու ունակությունը ավելի ցայտուն են արտահայտված սակավաշարժուն թյամբ պայմանավորված ուղեղի բրունիկ իշեմիզացման պայմաններում՝ համեմատ պատրաստուկի նմանատիպ ազդեցությանը և կալ իշեմիայի դեպքում:

### **Գիտագործնական նշանակությունը**

Ստացված արդյունքները նոր հեռանկարներ են բացում ցիտիկոլինի կիրառման համար՝ ուղղված

սակավաշարժ ապրելակերպով պայմանավորված  
այնպիսի տեղաշարժերի շտկմանը ինչպիսիք են  
նւղեղային արյան շրջանառության խանգար-  
ող մեները, տագնապի զարգացումը, շարժողական  
կոորդինացիայի խափանող մեները, հիշողության և  
նւսուցման գործընթացների վատթարացումը,  
նւղեղային հյուսվածքի կառուցվածքային  
փոփոխությունները:

# ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

## 1.1. Ուղեղային հյուսվածքի իշեմիկ վնասման դեղաբանական շտկման ուղիները


Ուղեղային արյան շրջանառության առանձնահատկությունը պայմանավորված է վերջինիս շատ բարձր ինքնակարգավորման հնարավորություններով: Բնականոն պայմաններում ուղեղային արյունամատակարարման մակարդակը նորմայում կազմում է միջինում 50-55 մլ /100գ հյուսվածք /րոպե (Fantini S. et al., 2016) և ներթուրաները հանգստի վիճակում կարող են գոյատևել մինչև 23 մլ /100գ մակարդակում՝ շնորհիվ արյան շրջանառության կարգավորման նյարդային, մկանսակա և ներթոքիմիական մեխանիզմների:

Այնուհանդերձ, ուղեղային հյուսվածքը շատ զգայուն է թթվածնաքաղցի նկատմամբ, քանի որ կազմելով մարմնի ընդհանուր զանգվածի 2%-ը, ծախսում է ներշնչված թթվածնի 20%-ը և հանդիսանում է լյարդի կողմից արտադրվող գլյուկոզի հիմնական սպառողը (Fantini S. et al., 2016):

Ուղեղային արյունամատակարարման խափանման հետևանքով զարգացող ախտաբանական վիճակներից կարևորվում է ուղեղի կաթվածը (Li J. et al., 2016), որը հանդիսանում է ամբողջ աշխարհում մահացությունների կրորդ և հաշմանդամության հիմնական պատճառները (Yan L.L. et al., 2017): Այն դասակարգվում է իշեմիկ կաթվածի (դեպքերի 75-85%-ը), ներուղեղային արյունահոսության, սուբարախնոիդալ արյունահոսության և ուղեղային երակային սինուսիթրոմբոզի (Martynov M.Y. and Gusev E.J., 2015):

Իշեմիայի ենթարկված ուղեղային հյուսվածքում ձևավորվում են երեք պարենխիմային անոթային վիճակներ՝ իշեմիկ

օջախը, դրան հարակից տեղակայված «իշեմիկ կիսաստվերը» (penumbra), վերջինիս էլ հարակից օլիգեմիայի ենթարկված հյուսվածքը (Manning N.W. et al., 2014): «իշեմիկ կիսաստվերի» շրջանը բնորոշվում է որպես ոչ ֆունկցիոնալ, սակայն արյունահոսքի բարելավման պարագայում դեռևս ֆունկցիոնալ վերականգնման ենթակա գոտի: Ուստի, հենց «կիսաստվերի» հատվածի ուղեղային հյուսվածքի վերականգնմանն է ուղղված դեղաբանական միջամտությունը՝ նեյրոպրոտեկցիան (Martynov M.Y. and Gusev E.J., 2015; Patel R.A.G. and McMullen P.W., 2017): Ընդ որում, դեղաբուժումն առավել արդյունավետ է, եթե իրականացվում է թերապևտիկ պատուհանի (մինչև 72 ժամ) սահմանում (Fu Y. et al., 2014):



Նկար 1.12 Ե մի կ կաթվածի բիոքիմիական կասկադը և դեղաբանական միջամտության ուղիները

Նշումներ. ↑-դրդում / 2 ատացում, ↓- նվազեցում

Կաթվածի բուժման ռազմավարությունը կառուցվել է հիմնվելով դեղաբանական միջամտության տրամաբանական թիրախների վրա, որոնք առանձնացվել են էլենտիվ շեմիկ կաթվածի զարգացման ախտաֆիզիոլոգիական մեխանիզմներից (նկար 1), ներառյալ կալցիոմ-գլուտամատային էքսայտոտոքսիկականությունը

և ԳԱԿԹ-ի ամակարգի ակտիվությունը, ազատ  
ռադիկալները և թթվածնի ակտիվ ձևերի  
կուտակումը, թաղանթային ֆոսֆոլիպիդների  
կառուցվածքային տեղաշարժերը, NO-սինթեզային  
ակտիվությունը փոփոխությունները և դրանից բխող  
ազոտի օքսիդի և պերօքսիտի տրիտիկուտակումը:

Համապատասխան վերը նշվածի ուղեղի  
իշեմիզացված հյուսվածքի պաշտպանությունը  
թրոմբոլիտիկ և հակաադրեգանտ միջոցներից  
ազատ ներառում է գլուտամատային նյարդափոխանցումը  
ընկճող միջոցներ, հակաօքսիդանտներ, ԳԱԿԹ-ի  
համազդիչներ, թաղանթային ֆոսֆոլիպիդների  
կայունացուցիչներ և այլն (Grupke S. et al., 2015; Matthew N.B. et al.,  
2016):

Նյարդապաշտպան թերապիայի նշանակությունը  
էլավելիկարևորվեց, երբ արյան հոսքը խթանող  
միջոցների կիրառումը ցույց տվեց, որ  
արյունահոսքի խթանման հետ մեկտեղ առաջ է  
գալիս ռեպերֆուզիայով հարուցված հավելյալ  
վնասվածքի կանխման խնդիրը (Martynov M.Y. and Gusev E.J., 2015),  
քանի որ ռեպերֆուզիոն արյունը հարուստ է  
նյարդաթունային արգասիքներով և պարունակում  
է էյկոզոհիտներ, որոնք կարող են խցանել փոքր  
անոթները:

Ինչպես երևում է նկար 1-ից իշեմիայի  
կարգավորման դեղաբանական միջամտության  
տրամաբանական ուղիներն են.

- գլուտամատային համակարգի  
ակտիվությունը ընկճումը,
- ԳԱԿԹ համակարգի ակտիվությունը խթանումը,
- պոտենցիալ-կախյալ կալցիոնական  
անցուղիների պաշարումը,
- հակաօքսիդանտային համակարգի  
խթանումը,
- բջջաթաղանթի կայունացումը:

**Գլ ու տամատայ ի ն համակարգի ակտիվ ու թյ ու ն ը  
ը ն կ ճ ո ղ դ ե ղ ե ր**

Գլ ու տամատը հանդիսանում է կենտրոնական նյարդային համակարգի (ԿՆՅ) գլխավոր դրդիչ ամինաթթվային նյարդափոխադրիչը: Ուղեղային կաթվածի մեկնարկից մի քանի րոպե անց իշեմիզացված հատվածում խաթարվում է ԱԵՖ-կախյալ իոնային պոմպի աշխատանքը և տեղի է ունենում ներթափանցիկ  $\text{Na}^+$  և  $\text{Ca}^{2+}$  իոնների կուտակում, որը հանգեցնում է գլուտամատի ձերթագատմանը դեպի արտաթափային տարածք (Lai T.W. et al., 2014): Գլուտամատի անոմալ ձերթագատումը և/կամ սինապտիկ ճեղքից վերջինիս քլորենսի դիսֆունկցիան կարող է առաջացնել գլուտամատային NMDA և AMPA ընկալիչների գերդրդում: Իր հերթին գլուտամատով խթանված ընկալիչների դրդումը էլավելի է մեծացնում  $\text{Ca}^{2+}$  և  $\text{Na}^+$  իոնների ներհոսքը դեպի բջիջ: Այս ամենը հանգեցնում է նյարդային բջիջների վնասման, որը հայտնի է որպես «էքսայտոտոքսիկական ու թյ ու ն» (Quillinan N., 2016)՝ իշեմիայով հարուցված նյարդային բջիջների մահվան հիմքում ընկած կարևորագույն պատճառ: Սինապտիկ ճեղքից գլուտամատի քլորենսի գործընթացում մեծ դեր ունի գլխավոր գլուտամատային ԴԱԹՓ-2 (դրդիչ ամինաթթվի փոխադրիչ -2) փոխադրիչը (Takahashi et al., 2015), որն ապահովում է գլուտամատի մինչև 90% փոխադրումը (O'Donovan S.M. et al., 2017): Յուրաքանչյուր տրված, որ իշեմիայի պայմաններում գլուտամատային փոխադրիչների «downregulation»-ը կարող է հանգեցնել ներոնների մահվան (Rao V.L.R., 2000): Ներկայումս կլինավորվել և նկարագրվել են թվով հինգ ԴԱԹՓ-եր, որոնց

մեծամասնությունը օժտված է հյուսվածքային ընտրողականությամբ (O'Donovan S.M. et al., 2017):

Իշեմիկ խանգարումների վերը նշված մեխանիզմների հիման վրա առաջարկվել են գլուտամատերգիկ նյարդապաշտպան դեղաբանական միջամտության ուղիները՝ ներառյալ գլուտամատային ընկալիչների պաշարիչները, գլուտամատի ձերբագատումը ընկճող միացությունները, ինչպես նաև ԴԱԹՓ-2-ի մոդուլյատորները: Սակայն նշված խմբերին պատկանող դեղեր ստեղծելու փորձերը հիմնականում սահմանափակվել են փորձարկումների սկզբնական փուլերով, քանի որ այն արդյունքները, որոնք ստացվում էին փորձարարական պայմաններում չէին դրսևորվում կլինիկական հետազոտությունները նթացքում (Paul A.L. and John H.Z., 2017; Mozaffarian D. et al., 2016): Բացի այդ պարզվեց, որ այս խմբի միացություններին բնորոշ են բազմաթիվ արտահայտված կողմնակի ազդեցություններ:

NMDA ընկալիչների պաշարիչների հնարավոր կիրառման ուղղությամբ իրականացված լայնածավալ հետազոտություններից համեմատաբար կարևորվել են մի քանիսը: Այսպես, դեքստրոմեթորֆանը և նրա դեմեթիլացված մետաբոլիտ դեքտրորֆանը հանդիսանալով ոչ ընտրողական NMDA ընկալիչների ներհակորդներ, հեշտությամբ թափանցում են արյուն-ուղեղային պատնեշով: Փորձարարական պայմաններում մկների և ճագարների մոտ սուր իշեմիայի մոդելում դեքտրորֆանի կիրառումը նվազեցրել է կաթվածի ծավալը (George C.P. et al., 1988): Կլինիկական հետազոտությունները նթացքում ապացուցվեց վերջինիս անվտանգությունը բուժիչ դեղաչափերով (Albers G.W. et al., 1995), սակայն



արդյունավետությունը՝ համեմատաբար ցածր խմբի չափացուցիչ (Mousavi S.A. et al., 2011):

Գլուխամտային էքսայտոտոքսիկականության նվազեցմանն ուղղված հետազոտություններում անբավարար արդյունքներ են գրանցվել նաև ընտրողական չմրցակցային NMDA ընկալիչ-կապված իոնային անցուղու արգելիչներ ցերեւտատի և ապտիգանելի (Dyker A.G. et al., 1999, Albers G.W. et al., 2001), ինչպես նաև հետսինապսային NMDA ընկալիչի NR2B ենթամիավորի սելեկտիվ ներհակորդորաքսոպրոդիլի (Saltarelli M.W. et al., 2004) կիրառման ժամանակ:

Հիմք ընդունելով մագնեզիոլմի NMDA ընկալիչ կախյալ կալցիոլմական անցուղիները պաշարելու հատկությունը (Nikolaev M.V. et al., 2012), այն հետազոտվեց, որպեսզի գլուխամտային էքսայտոտոքսիկականությանն ուղղված միջոց: Առնետների վրա հետազոտությունները ցույց տվեցին, որ մագնեզիոլմի քլորիդի լուծույթի ներորոձայնային (ն/ո) ներարկումը միջին ուղեղային զարկերակի կապումից (ՄՈԻԶԿ) անմիջապես հետո արտահայտված նվազեցում է կաթվածի ծավալը (Meloni B.P. et al., 2006): Սակայն, 1700 հիվանդների ներգրավմամբ III փուլում գտնվող կլինիկական հետազոտությունների արդյունքում էական տարբերություն չգրանցվեց մագնեզիոլմի սուլֆատ ստացող և ֆիզիոլոգիական լուծույթ ստացող խմբերի միջև (Muir K.W. et al., 2004; Mozaffarian D. et al., 2016):

Լյուբեկոլը 3,4-երկֆտորբենզոթիազոլի S-իզոմերն է, որը հանդիսանում է գլուխամտակախյալ NO-սինթազայի մոդուլյատոր (Lesage A.S. et al., 1996), իշեմիկ պենումբրայում կանխում է արտաքիչային գլուխամտաթքանակի շատացումը (Scheller D.K. et al., 1997), սակայն կրկնակկոլյար պլացեբո վերահսկվող III-րդ փուլի կլինիկական հետազոտությունը

չ ապացուցեց վերջինիս արդյունավետությունը (Diener H.C. et al., 2000):

Գլուտամատի NMDA ընկալիչը պաշարելու հատկությունամբ է օժտված նաև գլիցինը, որը ևս հետազոտողներին ուշադրության կենտրոնում էր որպես պոտենցիալ նյարդապաշտպան միջոց: Միջարք հետազոտություններն ապացուցել են գլիցինի անվտանգությունը, սակայն վերջինիս արդյունավետությունը բավարարչեր այն կլինիկայում կիրառելու համար (Gusev E.I. et al., 2000): Նմանատիպ ազդեցությամբ են օժտված նաև գավեստինելը և լիկոստինելը, որոնք հանդիսանում են NMDA ընկալիչի գլիցինային կայքի պաշարիչներ: Փորձարարական հետազոտությունների ժամանակ դրանց կիրառումը նվազեցրել է կաթվածի ծավալը, սակայն երկու III փուլում գտնվող ռանդոմիզացված վերահսկվող հետազոտությունների արդյունքում վերջիններիս արդյունավետությունը չհաստատվեց (Albers G.W. et al., 1999; Lees K.R. et al., 2000):

AMPA ընկալիչների ներհակոդների (ZK200755 և YM872/զոնամպանելը) նախակլինիկական և կլինիկական փորձարկումները (Elting J.W. et al., 2002) մատնվեցին անհաջողության (Takahashi M. et al., 2002), քանի որ չնայած դրանց կողմից գրանցված NIHSS-ի (National Institutes of Health Stroke Scale) միավորը նվազեցնելու հատկությունը, նկատվում էր կաթվածի S-100B բիոմարկերի քանակի մեծացում (Elting J.W. et al., 2002):

Իշեմիայով հարուցված նեյրոնների վնասումը կանխարգելելու կամ վերականգնելու նպատակով ուսումնասիրվել են նաև ԴԱԹՓ-2-ի մոդուլյատորները, որոնց թվին է պատկանում ԴԱԹՓ-2-ի միջոցով գլուտամատի գավթումը խթանող Parawixia bistriata սարդի թույնից անջատված պարավիկսին 1-

ը (Fontana A.C. et al., 2007): Սակայն կլի նիկական փորձարկումներն արդյունքում պարզվեց, որ նրանց արդյունավետությունը շատ ցածր է և ոչ հավաստի:

Փորձարարական մի շարք հետազոտություններ ցույց են տվել, որ ԴԱԹՓ-2-ի էքսպրեսիայի մեծացումը հանգեցնում է նյարդապաշտպան ազդեցության (Chelini A., 2017): Աստրոցիտները հանգեցնում են ԴԱԹՓ-2-ի էքսպրեսիայի և առնետներին գլխուղեղում աստրոցիտների կողմից գլուտամատի զավթման մեծացմանը, դրանով իսկ կարգավորվում է գլուտամատի քանակությունը գլխուղեղում:

Բացի գլուտամատային ընկալիչների ներհանրողներից մեծ հետաքրքրություն են ներկայացրել նաև գլուտամատի ձերբագատումը ընկճող միացությունները: Դրանց թվին են պատկանում սիպատրիգինը և ֆոսպենիտոինը, որոնք նախակլի նիկական և կլի նիկական հետազոտություններն ընթացքում չցուցաբերեցին բավարարար արդյունավետություն (Muir K.W. et al., 2000; Pulsinelli W.A. 2008):

**ԳԱԿԹ-ի ազոնիտներ**

Բջջի իշեմիկ վնասման կարևոր մեխանիզմներից է հանդիսանում ԳԱԿԹ- գլուտամատային հավասարակշռության խախտումը, երբ գերիշխում է գլուտամատի առաջացումը բերելով գլուտամատային էքսայտատոքսիկականության և բջջի մահվան (Hu Y. et al., 2017): Հիմնվելով այս կարևոր փաստի վրա բջջի իշեմիկ խանգարումների դեղաբանական կանխման տրամաբանական ուղղություններն հանդիսացան գլուտամատի ազդեցությունը ընկճող կամ ԳԱԿԹ համակարգի ակտիվությունը խթանող միջոցների

փորձարկումները՝ որպես կաթվածի բուժման հեռանկարային միջոցներ (Hiu T. et al., 2016):

ԳԱԿԹ-երգիկ միացություններին ուսումնասիրումը որպես նյարդաշտպան միջոցներ ավելի հիմնավորվեց, երբ այս նպատակով գլուտամատային ընկալիչների ներհանրողներին հնարավոր կիրառման վերաբերյալ հետազոտությունները վկայեցին, որ նախդրանց արդյունավետությունը չափազանց ցածր է և բացի այդ թե՛ NMDA, թե՛ AMPA ընկալիչների ներհանրողներին կիրառումը ուղեկցվում էր բազմաթիվ արտահայտված կողմնակի ազդեցություններով, ինչը և պատճառ հանդիսացավ վերջիններիս կիրառումից հրաժարվելուն (Paul A.L. and John H.Z., 2017):

ԳԱԿԹ համակարգի վրա ազդող թե՛ հայտնի դեղերի, թե՛ նոր փորձարկվող միջոցների հետազոտությունները վկայեցին, որ գլուտամատային նյարդատոքսիկականության կանխման այս ճանապարհը ավելի արդարացված է (Lai T.W. et al., 2014; Hiou T. et al., 2016), ինչի մասին են վկայում փորձարարական և կլինիկական հետազոտությունները:

Այսպես, արտահայտված տազանապամարիչ ազդեցությունը յամբոժտված պրեգաբալինը (Aşci S. Et al., 2016), գաբապենտինը (Comi A.M. et al., 2008), վիգաբատրինը և տիագաբինը (Costa C. et al., 2004) մեծացնում են ԳԱԿԹ-ի քանակությունը և փորձարարական պայմաններում ցուցաբերում նյարդապաշտպան ազդեցության:

Ցույց է տրված ԳԱԿԹ-A և ԳԱԿԹ-B ընկալիչների տարբեր համակորդներին նյարդապաշտպան ազդեցությունը ՄՈՒՉԿ-ի և անցողիկ իշեմիայի փորձարարական մոդելներում: Հաստատվել է նաև, որ ԳԱԿԹ-A և ԳԱԿԹ-B ընկալիչների համակորդներին միաժամանակյա կիրառումը *in vitro* պայմաններում

ցուցաբերում է նյարդապաշտպան ազդեցություն և մեծացնում է էնդոգեն ԳԱԿԹ-A-ի քանակությունը (Tu H. et al., 2010):

Կլինիկական հետազոտությունները արդյունքները ԳԱԿԹ ընկալիչների հայտնի ազոնիստների կիրառմամբ վկայում են, որ վերջիններս օժտված են նյարդապաշտպան ազդեցությամբ: Այսպես, ԳԱԿԹ-A ընկալիչի համակորդ մոլեկուլը կաթվածի տարբեր մոդելներում ցուցաբերում է պաշտպանիչ ազդեցություն (Zhou C. et al., 2008): ԳԱԿԹ-A ընկալիչի մեկայլ համակորդ ֆելբամատը գլոբալ իշեմիայի մոդելում նույնպես ցուցաբերում է նյարդապաշտպան ազդեցություն (Shuaib A. et al., 1996):

ԳԱԿԹ-A ընկալիչի համակորդ սեդատիվ միջոց հանդիսացող կլոմեթիազոլը կաթվածի փորձարարական մոդելներում նվազեցնում է առնետների և ավելի փոքր կրծողների ուղեղային հյուսվածքի կաթվածի ծավալը համապատասխանաբար 58% և 32%-ով (Marshall J.W. et al., 1999): Սակայն, CLASS (Clomethiazole Acute Stroke Study) և CLASS-I ռանդոմիզացված կլինիկական հետազոտությունները ցույց տվեցին, որ պլացեբո խմբի համեմատ բուժման արդյունավետությունը արտահայտված չէ (Lyden P. et al., 2002): Նմանատիպ արդյունք է գրանցվել, երբ ԳԱԿԹ-բենզոդիազեպինային ընկալիչի մեկայլ ազոնիստ դիազեպամի ազդեցությունը գնահատվել է կլինիկայում կաթվածին հաջորդող 12 ժամերի ընթացքում և էական տարբերություն պլացեբո խմբի համեմատ չի ցուցաբերել (Lodder J. et al., 2006):

ԳԱԿԹ-ի ազոնիստների թվով 2838 հիվանդների ներգրավմամբ վերջին 5 կլինիկական հետազոտությունների մեծա-անալիզը չցուցաբերեց արդյունքներին նշանակալի

տարբերություն (Liu J. et al., 2018), սակայն հաշվի առնելով ԳԱԿԹ համակարգի ակտիվությունը խթանող դեղերի համեմատաբար ավելի բարձր անվտանգությունը գլուտամատերգիկ միացությունների համեմատ, յուրաքանչյուր 2 տարիների ընթացքում հավաքված տվյալների մետա-անալիզի տվյալները չափազանց կարևորվում են:

***Պոտենցիալ -կախյալ կալցիոլմական մոնոցրեթերի պաշարիչներ***

Սուր կաթվածի ժամանակ լայնորեն հետազոտվել են նաև կալցիոլմական անցուղիների պաշարիչները, որոնց նյարդապաշտպան ազդեցությունը ուղղված է կանխելու իշեմիայի հետևանքով զարգացող հավելյալ քանակներով ներբջջային կալցիոլմիկոլտակոլմը և հետևաբար նաև նեյրոնների վնասումը: Այս խմբի դեղերից համեմատաբար ավելի լայնորեն է կիրառվել նիմոդիպինը (Мирзоян Р.С. и соавт., 1998; Patel R.A.G. and McMullen P.W., 2017), սակայն դրա արդյունավետության վերաբերյալ թե՛ փորձարարական, թե՛ կլինիկական հետազոտությունների արդյունքները շատ հակասական են: Այսպես, թվով 64 նախակլինիկական և կլինիկական ռանդոմիզացված վերահսկվող հետազոտություններում գնահատվել է նիմոդիպինի արդյունավետությունը կաթվածի ժամանակ (Hom J. et al., 2001), սակայն վաղաժամ դադարեցվել են հիվանդների մոտ դեղի անբավարար ազդեցության հետևանքով:

***Ազատ ռադիկալների առաջացումը և բջջի օքսիդատիվ վնասումը կանխող միջոցներ***

Չայտնի է, որ իշեմիկ խանգարումների զարգացման կարևորագույն գործոնն է հանդիսանում թթվածնի ակտիվ ձևերի կոլտակոլմը, որը բերում է բջջի վնասման՝ նուկլեինաթթուների, սպիտակուցների և ճարպերի

քայքայման և/կամ գետերի էքսպրեսիայի ճանապարհով՝ հանգեցնելով բջջային հաղորդակցման խանգարմանը (Sun M.S. et al., 2018): Գլխուղեղում թթվածնի ակտիվ ձևերի հիմնական աղբյուր են հանդիսանում միտոքոնդրիալ շնչառական շղթան, NADPH օքսիդազները և քսանթին օքսիդազը (Carbone F. et al., 2015): Ֆոսֆոլիպիդների ճեղքումը տրանզիտոր ուղեղային իշեմիայի արդյունքում նյարդային բջջիջների մահվան կարևոր նպաստող գործոններից է: Ֆոսֆոլիպազ Ա2-ը (ՖԼԱ2) և արախիդոնաթթուն (ԱԹ) առանցքային դեր ունեն հետկաթվածային օքսիդատիվ սթրեսի զարգացման մեջ (Ugidos I.F. et al., 2017): Ֆոսֆոլիպազ Ա2-ի ակտիվումը քարձրացման արդյունքում մեծանում է արախիդոնաթթվի քանակությունը, որը հանգեցնում է թթվածնի ակտիվ ձևերի առաջացմանը, լիպիդների գերօքսիդացմանը և ալդեհիդների կուտակմանը (մալոնդիալդեհիդ, 4-հիդրօքսինոնենալ և ակրոլեին): Սուր կաթվածի ընթացքում գլուտամատի և ներբջջային  $Ca^{2+}$  իոնների շատացման արդյունքում ակտիվանում է ցիտոզոլային  $Ca^{2+}$  կախյալ ՖԼԱ2-ը՝ հանգեցնելով ֆոսֆոլիպիդների հիդրոլիզի և ազատ ճարպաթթուների (ԱԾԹ) քանակի շատացման: Ազատ ԱԹ-ն կուտակվում է բջջի մեջ՝ խթանելով թթվածնի ակտիվ ձևերի ձևավորումը, մեծացնելով օքսիդատիվ վնասումը (Ugidos I.F. et al., 2017):

Վերը նշվածը միանգամայն հիմնավորում է հակաօքսիդանտների կիրառման նպատակահարմարությունը կաթվածի ժամանակ: Հակաօքսիդանտ պատրաստուկների ազդեցությունը հիմնականում իրականացվում է երեք ուղղություններով՝ ազատ ռադիկալների առաջացման ընկճում, դրանց կապում («մաքրում») կամ տրոհում (Margail I. et al., 2005):

Թթվածնի ակտիվ ձևերի առաջացումը ընկճող պատրաստուկների հիմնական թիրախներ են հանդիսանում \$երմենտները, որոնք պատասխանատու են վերջիններիս սինթեզի համար: Դրանց թվին են պատկանում NADPH օքսիդազները, որոնց պաշարի չնեղացնելու (Petrônio M.S. et al., 2013) և քսանթին օքսիդազը, որի արգելակիչ նեղացումը է ալլոպոլիսոլը (Okafor O.N. et al., 2017): Ալլոպոլիսոլը բացի միզաթթվի քանակը քչացնելուց, նվազեցնում է նաև սուպերօքսիդ անիոնի առաջացումը: Վերոնշյալ երկու պատրաստուկները խոստումնալից արդյունքներից ուղղաբերեցին նախակլիսիկական հետազոտությունների ընթացքում, սակայն կլիսիկական հետազոտությունները չհաստատեցին վերջիններիս բավարարար արդյունավետությունը (Dawson J. et al., 2009; Altenhöfer S. et al., 2015):

Ուղեղի իշեմիկ կաթվածի բուժման նպատակով մի շարք պատրաստուկներ են կիրառվել ԱՌ-ի «մաքրման» նպատակով, սակայն նախակլիսիկական հետազոտություններից կլիսիկականի անցումը հիասթափեցնող արդյունքներ է գրանցել: Այդպիսի պատրաստուկներից է հանդիսանում ամինոստերոիդային կառուցվածքով տիրիլազոմետսիլատը, որը ազատ ռադիկալների հզոր ակցեպտոր է և արգելակում է լիպիդների թաղանթային գերօքսիդազները (առանց ստերոիդային հորմոնային ակտիվություն) (Park C.K. and Hall E.D., 1994): Վերջինս հետազոտվել է որպես նյարդապաշտպան միջոց, սակայն պատրաստուկ ստացող հիվանդների մոտ երեք ամիս անց գրանցվել է վիճակի վատթարացում (Sena E. et al., 2007):

Եղարավոնը, որը նույնպես ԱՌ միացնող միացությունների շարքին է պատկանում (Watanabe T. Et al., 2004)՝ ճապոնիայում հաստատվել է որպես



նյարդապաշտպան միջոց գլխուղեղի կաթվածի բուժման նպատակով (Lapchak P.A., 2010): Յայտնի է նրա պերօքսիդ, հիդրօքսիլ և սուպերօքսիդ ռադիկալների քանակը նվազեցնելու հատկությունը (Higashi Y., 2009), սակայն վերջինիս նյարդապաշտպան ազդեցության մեխանիզմները մինչև վերջ բացահայտված չեն:

Կաթվածի մի շարք փորձարարական մոդելներում ոսուլմնասիրվել են ԱՌ-ի տրոհումը նվազեցնող միացությունները, որոնց հակօքսիդանտ ազդեցությունը պայմանավորված է սուպերօքսիդ դիսմուտազի (ՍՕԴ) ակտիվության խթանմամբ: ՍՕԴ-ը կատալիզում է  $O_2$ -ի փոխակերպումը նվազ ռեակտիվ  $H_2O_2$ -ի և  $O_2$ -ի: Կատալազը և գլուտաթիոն պերօքսիդազը նպաստում են միջանկյալ արգասիք  $H_2O_2$ -ի հեռացմանը՝ պոտենցելով ՍՕԴ-ի ազդեցությունը (Watanabe T. et al., 2004): Նմանատիպ ազդեցությամբ է օժտված էբսելենը, որը նախակլիսիկական հետազոտությունների ընթացքում բերում էր փորձարարական կաթվածի դրական ելքի (Imai H. et al., 2001), ինչի մասին չի կարելի պնդել կլիսիկական փորձարկումների արդյունքների հիման վրա (Yamaguchi T. et al., 1998):

Իշեմիայի ժամանակ առաջացող ազատ ռադիկալների քանակի ու շարունակական էարժան չափազանց ռեակտիվ պերօքսիտրիտ ռադիկալը, որը առաջանում է NO-ի և թթվածնի ազատ ձևերի փոխազդեցության արդյունքում (Chen X. et al., 2013):

NO-ի դերը կաթվածի զարգացման գործընթացում միատարր չէ: Կախված վերջինիս առաջացմանը մասնակցող NO-սինթազաների (NOS) տեսակից այն կարող է ունենալ կա՛մ նյարդապաշտպան, կա՛մ նյարդաթունային ազդեցություն: Էնդոթելային NO-սինթազը (eNOS) պատասխանատու է NO-ի սինթեզի համար, որը ցուցաբերում է նյարդապաշտպան

ազդեցությունը շնորհիվ անոթալայնիչ և  
նեղեղային արյան շրջանառությունը և վազոնոդ  
ազդեցության, ինչպես նաև նյարդային  
հյուսվածքի պերիֆերիկ կարգավորումը  
բարելավող հատկության: Ինդուկցված (iNOS) և  
նյարդային (nNOS) NO-սինթազաները նպաստում են նաև  
նյարդաթունայնությանը (Chen Z. Et al., 2017):

Նկարագրված իջնահայտե դառնում, որ ազոտի  
օքսիդի քանակի, ինչպես նաև NO-սինթազի  
ակտիվության փոփոխությունները կարող են  
հանդիսանալ նյարդապաշտպան ազդեցության և  
մեկ թիրախ: Այսպես, և նեբելոզոլը, որը այս խմբի  
թեշտառավել ուսումնասիրված միջոցն է,  
հիպօքսիայի ենթարկված բջիջներում ընկճելով  
գլուտամատ-հարուցված NO-սինթազային  
ակտիվությունը նվազեցնում է NO-ի քանակը և  
հաջորդիվ կանխում է ONOO-ի կուտակումը (Lesage A.S. et al.,  
1996): Կատարվել են մի շարք նախակլինիկական և  
կլինիկական հետազոտություններ, որոնք դրական  
արդյունքներ են գրանցել: Սակայն կիրառման  
ընթացքում գրանցված կողմնակի  
ազդեցությունների պատճառով կլինիկական  
փորձարկման արդյունքները ճանաչվել են  
անբավարար հետազոտությունների համար: Ավելին,  
հինգ կլինիկական հետազոտությունների մետա-  
անալիզը գրանցեցին, որ և նեբելոզոլը  
մահացությունը չի նվազեցնում համեմատ  
պլացեբոյի, փոխարենը ցուցաբերում է  
կարդիոտոքսիկ ազդեցություն՝ առաջացնելով Q-T  
ինտերվալի երկարացում (Gandolfo C. et al., 2002):

***Թաղանթ կայուն և սոցիոներ***

Թաղանթ կայուն սոցիոներ դեղերը այս կամ այն  
ճանապարհով կանխում են իշեմիայի  
պայմաններում նկատվող բջջաթաղանթի  
կառուցվածքը (Patel R.A.G. and McMullen P.W., 2017): Ինչպես ցույց

են տալիս նախակլիսիկական և կլիսիկական փորձարկումներին արդյունքները այս խմբի պրեպարատներին անավել արդյունավետությամբ են ցուցաբերել էդարավունը (Lapchak P.A., 2010), մեքսիկոնը (Androfagina O.V. et al., 2015), ինչպես նաև ցիտիկոնը (Grieb P., 2014):

Այսպիսով, ուղեղի իշեմիկ խանգարումների նյարդապաշտպան ֆարմակոթերապիայի գրականական վերլուծությունը վկայում է, որ շատ միացությունների կիրառման հնարավորությունները սահմանափակվում են կլիսիկական փորձարկումների փոփոխումով, հատկապես անվտանգությունը արտացոլող ցուցանիշներով: Այս առումով, իհարկե, շահեկան են թաղանթ կայունացնողները, ինչը և հիմք է հանդիսանում դրանց նվիրված հետազոտությունները շարունակելու (Grupke S. et al., 2015; Matthew N.B. et al., 2016) և ավելի նփնտրելու դրանց կիրառման ուղիները ուղեղի արյան շրջանառությունն այլ խանգարումների համար:

**1.2. Սակավաշարժությունը՝ որպես ուղեղի արյան շրջանառության խանգարումների զարգացման ռիսկի գործոն**

Գիտատեխնիկական զարգացմանը զուգընթաց ժամանակակից մարդուն բնորոշ է սակավաշարժ ապրելակերպ, որը այսօր հանդիսանում է ռիսկի գործոն մի շարք լուրջ ախտաբանական գործընթացների համար՝ ներառյալ ճարպակալման և ավելորդ քաշի ձեռք բերման (Fogelholm M., 2010), քաղցկեղի (Hu G. et al., 2005), սրտի իշեմիկ հիվանդության, դիսլիպոպրոտեինեմիայի, ուղեղի իշեմիկ վնասման (Cox J.F. 3rd., 2014), սրտի պսակային հիվանդության (CHD) (Valero-Elizondo J. et al., 2016), օստեոպորոզի (Kruk J., 2007), 2-րդ տեսակի շաքարային դիաբետի (Humphreys B.R. et al., 2014), զարկերակային գերճնշման (Castro I. et al., 2015),

հանգեցնում է օրգանիզմի վաղաժամ ծերացմանը և մահացու թյան մեծացմանը (Kim J. et al., 2013; Naci H. and Ioannidis J.P., 2015), նպաստում է նեյրոդեգեներատիվ հիվանդությունների, դեպրեսիայի, էմոցիոնալ սթրեսի զարգացմանը (Hilton C. et al., 2015), ինչպես նաև ուղեղային արյան շրջանառության խանգարումների զարգացմանը (Акопян В.П., 2003; Freese J. et al., 2017):

Այս ամենը հիմնավորում է այն փաստը, որ սակավաշարժ ապրելակերպի պայմաններում զարգացող ախտաբանական գործընթացների ուսումնասիրությունը շարունակում է մնալ հետազոտողների ուշադրության կենտրոնում՝ որպես բացառիկ կարևոր բժշկական խնդիր (Bueno D.R. et al., 2016; González K. et al., 2017):

Յիպոկրեսեզիան հանգեցնում է օրգանիզմի հոմեոստազի խանգարմանը (Федоров И.В., 1982), նպաստելով ածխաջրատային (Акопян В.П. и соавт., 1994), սպիտակուցային (Тигранян Р.А., 1990) և ճարպային (Едигарова Л.В. и соавт., 1996) փոխանակությունների, Са-ակն հոմեոստազի խանգարումներին (Мелконян К.В. и соавт., 1997):

Սակավաշարժ ապրելակերպ վարող անձանց համար չափազանց մեծ է իշեմիկ կաթվածի զարգացման ռիսկը, ինչը խթան հանդիսացավ ուսումնասիրել ուղեղային արյունահոսքի \$ ունկցիոնալ վիճակը սակավաշարժ թյան պայմաններում:

Ինչպես վկայում են այս ուղղությամբ կատարված հետազոտությունները, սակավաշարժ թյան պայմաններում նկատվում են անգիոդիստոնիկ և դիսցիրկուլյատոր խանգարումներ, որոնք ուղեկցվում են անոթի պատի թափանցելիության բարձրացմամբ, գլխուղեղի կեղևի, ենթակեղևային նյութի, ուղեղային ցողունի, ուղեղիկի զարկերակների

մեծ մասի տրամագծի նվազեցմամբ և հարանոթային այտուցի գարգացմամբ (Лобзин В.С. и соавт., 1979):

Սակավաշարժունության պայմաններում նկատվող խանգարումները նախադրյալներ են ստեղծում հոգեներգործական սթրեսների հանդեպ սիրտ-անոթային և ուղեղանոթային համակարգերի գերզգայունության համար՝ մկանային գործունեության միաժամանակյա խաթարման պարագայում: Անոթային փոփոխությունները առաջին փուլերում ադապտիվ են և կապված են սիրտ-անոթային համակարգի ֆունկցիոնալ ծանրաբեռնվածության նվազեցման հետ: Վերջինս, առաջին հերթին, պետք է նվազեցնի թթվածնի պահանջարկը՝ էներգիայի ծախսի կրճատման հետևանքով, երկրորդ՝ նվազում է նաև արյան հիդրոստատիկ ճնշումը (Коваленко Е.А., 1980): Որպես հետևանք, տեղի է ունենում արյան վերաբաշխում, որը պակաս «տնտեսող» է սրտի աշխատանքի համար, կտրուկ փոխելով արյունահոսքը և անոթային տոնուսը: Սակավաշարժունության գործոնի հետագա ազդեցության դեպքում ադապտացիոն-հարմարվողական ռեակցիաները կարող են ձեռք բերել պաթոլոգիական բնույթ:

Հյուսվածքների «թթվածնային կարգավորող մեխանիզմի» փոփոխությունը հանգեցնում է անոթային լարվածության անկայունության նվազեցմանը, անոթաշարժ կարգավորման մեխանիզմների խանգարմանը, որն իր հերթին ուղեկցվում է արյան շրջանառության ռեգիոնալ խանգարումներով, մազանոթային հյուսվածքի փոքրացումով և մազանոթային պատերի կառուցվածքի խախտմամբ (Букаева И.А., 1968):

Ինչպես ցույց են տվել Վ.Պ. Հակոբյանի և համահեղինակների կողմից կատարված լայնածավալ հետազոտության արդյունքները

հիպոկիսեզիայի պայմաններում ինքնակարգավորող մեխանիզմները, որոնք կոչված են ուղեղային հյուսվածքը բավարար քանակով արյամբ մատակարարելու խափանվում են (Акопян В.П., 2003): Իրականացված հետազոտությունները արդյունքում հնարավոր եղավ բացահայտել սակավաշարժողական պայմաններում զարգացող ուղեղային հյուսվածքի արյունահոսքի խանգարման հնարավոր մեխանիզմները և ցույց տալ նկատվող տեղաշարժերի դեղաբանական համուղղման հնարավոր ուղիները:

Պարզաբանված է, որ հիպոկիսեզիայի (ՅԿ) պայմաններում նկատվում է ուղեղի կեղևի տեղային արյան շրջանառության նվազում, որի խանգարման խորությունը կախված է հիպոկիսեզիայի տևողությունից (Накопian V.P. et al., 1993; Кочарян А.Ж., 1994): Ուղեղի միկրոշրջանառության հունի ուսումնասիրությունները (Кочарян А.Ж., 1994; Мелконян К.В., 1993), ինչպես նաև կառուցվածքային փոփոխությունները հետազոտումը (Баласанян М.Г., 2003) վկայում է, որ հիպոկիսեզիայի պայմաններում նկատվում են ուղեղային հյուսվածքի քրոնիկ իշեմիզացմանը բնորոշ տեղաշարժեր, որոնք ուղեկցվում են ուղեղային հյուսվածքի հիպոքսիկ խանգարումներով (Melkonyan K.V. and Hakoopian V.P., 1995; Hakoopian V.P. et al., 1999):

Շարժողական ակտիվության սահմանափակումը մեծացնում է ուղեղային հյուսվածքի անոթների զգայունությունը անոթասեղմիչ գործոնների հանդեպ, որը հանգեցնում է հիպոքսիայի զարգացմանը (Hakoopian V.P. et al., 1993): Համակարգային կոմպենսատոր մեխանիզմների անբավարար ազդեցության պայմաններում, որոնք ապահովում են սիրտ-անոթային համակարգի պատշաճ պատասխանը, հանգեցնում է նրան, որ որոշ չափով նկատվում է

անոթների տոնուսի ռեֆլեքսային կարգավորման կորուստ: Սակավաշարժություն պայմաններում խախտվում են ինքնակարգավորիչ մեխանիզմները, որոնք նախատեսված են ուղեղի հյուսվածքի արյան հոսքը անհրաժեշտ մակարդակով ապահովելու համար (Акопян В.П., 1999):

Հայտնաբերվել է, որ սակավաշարժության պարագայում ուղեղային միկրոշրջանառության խանգարումների զարգացման էական գործոններն են մեկը արյան պլազմայում և էրիթրոցիտների թաղանթներում վազոկոնստրիկտոր ազդեցությամբ օժտված մալոնային դիալդեհիդի հավելյալ կուտակումն է, որն ունակ է խթանելու թրոմբոցիտների ագրեգացիան և նպաստում է արյան մածուցիկության մեծացմանը, ինչպես նաև օժտված է դեղաչափ կախյալ պրոօքսիդատիվ ակտիվությամբ (Манукян А.А., 2004):

Փորձարարական հետազոտությունները ցույց են տվել, որ հիպոկիսեզիայի տևողությունն իջ կախված գլխուղեղի տարբեր կառույցներում փոփոխվում են նաև նյարդափոխադրիչների քանակությունները: Այսպես, շարժողական սահմանափակման տևողության մեծացմանը զուգընթաց հիպոթալամում, ստրիատումում և ուղեղիկում գրանցվում է կատեխոլամինների պարունակության մեծացում: Ավելի երկարատև սակավաշարժության պայմաններում հիպոկամպում գրանցվում է դոֆամինի քանակության նվազեցում, իսկ ստրիատումում և հիպոթալամում նկատվում է սերոտոնինի քանակության շատացում: Հիպոկիսեզիայի պայմաններում գլխուղեղի տարբեր կառույցներում փոխվում է նաև ԳԱԿԹ-ի քանակությունը, որն ունի ժամանակակախյալ բնույթ: Սակավաշարժության 15-րդ և 45-րդ օրերին

ստրիատուրալ գրանցվում է ԳԱԿԹ-ի քանակության շատացում, հիպոթալամում վերջինիս քանակությունը աճում է միայն սակավաշարժության 45-րդ օրը (Погосян В.А., 2011):

Հիպոկիսեզիալ պայմաններում ուսումնասիրվել են նաև NO-սինթազների ակտիվության փոփոխությունները, որպես իշեմիկ և նեյրոդեգեներատիվ գործընթացների կարևոր մարկեր: Չամաձայն կատարված հիստոքիմիական հետազոտությունների արդյունքների (Ашрафян К.Б., 2006), սակավաշարժության պայմաններում նկատվում է NO-սինթազի նեյրոնալ ենթատեսակի ակտիվության բարձրացում և էնդոթելային իզոֆերմենտի ակտիվության ընկճում: Ազոտի օքսիդի փոփոխությունը պայմանավորված տեղաշարժերի հիմնավորումը ՀԿ-ի պայմաններում իրականացվել է նաև դեղաբանական վերլուծության մեջ՝ NO-սինթազի արգելակիչների կիրառմամբ (Баласанян М.Г., 2003; Ашрафян К.Б., 2006):


Առանձնակի ուշադրություն են արժանացել ՀԿ-ի հետևանքով զարգացող կենդանիների վարքային փոփոխություններին ուսումնասիրությունները (Степанян З.В., 2000; Баласанян М.Г., 2003; Ашрафян К.Б., 2006), որոնք բացահայտել են, որ շարժողական ակտիվության սահմանափակումը հանգեցնում է փսիխոսոմատիկ փոփոխությունների զարգացմանը, էմոցիոնալ անկայունության առաջացմանը, քնի խանգարմանը, ինչպես նաև տագնապի զարգացմանը (Степанян З.В., 2000; Баласанян М.Г., 2003; Аюпян В.П. и соавт., 2006; Rebar A.L. et al., 2015): Ընդ որում ցույց է տրված, որ տարբեր շարժողական ակտիվության մեթոդով կենդանիների պատասխանը ՀԿ-ով պայմանավորված հոգեհոլզական սթրեսային ազդակի հանդեպ տարբեր է, ինչը կարևորվում է դեղաբանական համոլոգման համար նախատեսված դեղերի ճիշտ ընտրության հարցում:



Այսպիսով, գրականական աղբյուրների վերլուծությունը փաստում է, որ սակավաշարժուն պայմաններում գրանցվում են \$ ու կ ց ի ո ն ա լ , ն յ ու թ ա փ ո խ ա ն ա կ ա յ ի ն , կ առ ու ց վ ա ծ ք ա յ ի ն և վ առ ք ա գ ծ ա յ ի ն տեղաշարժեր, որոնք բնորոշ են ուղեղի բրոնհիշեմիզացմանը:

**1.3. Ցիտիկոլինի նյարդապաշտպան ազդեցությունը և դրահնարավոր մեխանիզմները**

Ցիտիկոլինը (ցիտիդին-5'-դիֆոսֆոխոլինը (ՑԴՖ-խոլին)) առաջին անգամ սինթեզվել է 1956թ.-ին (Kennedy E.P., 1956, Fujio T. and Maruyama A., 1997) և հետագոտվել որպես հեռանկարային դեղամիջոց նյարդաբանական խանգարումների բուժման համար՝ հիմնվելով նյարդային հյուսվածքում հայտնաբերված ցիտիդին դիֆոսֆոխոլինի հատկությունների վրա (Kennedy E.P. and Weiss S.B., 1955):




**Նկար 2.ՑԴՖ-խոլինի կառուցվածքը**

Առաջին հետազոտությունները կապված ցիտիկոլինի կիրառման հետ որպես դեղամիջոցի վերաբերում են նրա փորձարկումների Պարկինսոնի հիվանդության բուժման համար (Manaka S. and Sano K., 1974):

Ցիտիկոլինը մոնոնուկլեոտիդ է (Kennedy E.P. and Weiss S.B., 1956) բաղկացած ռիբոզից, ցիտոզինից, պիրոֆոսֆատից և խոլինից (նկար 2), որն օրգանիզմում տրոհվելով առաջացնում է ցիտիդին

և խոլին: Ցիտիդինը թեև երկրի ուղիով (նկար 3) մասնակցում է օրգանիզմում բջջաթաղանթի գլխավոր կառուցվածքային \$նս\$նլիպիդի՝ \$նս\$ատիդիլ խոլինի սինթեզին (Grieb P., 2014), ինչը կարևոր նշանակություն ունի նյարդային հյուսվածքի բնականոն \$ոլնկցիայի համար: Ինչպես երևում է նկար 3-ում խոլինը խոլին-կինազ ֆերմենտի մասնակցությամբ \$նս\$որիլացվում է, առաջացած \$նս\$ոխոլինը միանում է ցիտիդինեռ \$նս\$ատին առաջացնելով ցիտիկոլին: Ցիտիկոլինը այնուհետ կապվում է դիագիլգերոլի հետ առաջացնելով \$նս\$ատիդիլ խոլին՝ խոլին \$նս\$ոտրանսֆերազ ֆերմենտի մասնակցությամբ:



**Նկար 3.** ՑԴՖ-խոլինի սինթեզի թեև երկրի ուղի (Grieb P., 2014):

Նշումներ. ATP՝ ադենոզին եռֆոսֆատ, ADP՝ ադենոզին երկֆոսֆատ, CK՝ խոլին կինազ, Choline-P՝ \$նս\$ոխոլին, CCT՝ CTP: \$նս\$ոխոլին ցիտիդիլ տրանսֆերազ, CTP՝ ցիտիդին եռֆոսֆատ, PPi՝ պիրոֆոսֆատ, DAG՝ 1,2-դիագիլգերոլ, CMP՝ ցիտիդին մոնոֆոսֆատ, CPT՝ DAG: ՑԴՖ-խոլին խոլին \$նս\$ոտրանսֆերազ, PC՝ \$նս\$ատիդիլ խոլին:

Ցիտիկոլինը օժտված է նյարդապաշտպան, նյարդակարգավորիչ և նյարդային հյուսվածքի կառուցվածքը վերականգնող հատկություններով (Adibhatla R.M. and Hatcher J.F., 2005): Ապացուցված է ցիտիկոլինի արդյունավետությունը ԿՆՅ-ի միջարթ

խանգարումներին դեպքում՝ հատկապես գլխուղեղի սուր և քրոնիկ իշեմիայի, ներուղեղային արյունահոսությունների, գլոբալ ուղեղային հիպոքսիայի և նյարդագեներատիվ հիվանդությունների ժամանակ (Martynov M.Y. and Gusev E.J., 2015):

Յետագոտությունները հաստատել են, որ ցիտիկոլինը նվազեցնում է գլոտամատով հարուցված վնասումը և կաթվածի ծավալը՝ բարձրացնելով նյարդային բջիջների կենսունակությունը, նպաստելով նյարդաբանական դեֆիցիտի թուլացմանը և բարելավելով կենդանիների ուսուցման գործընթացը (Clark W.M., 2009):

Վերջին հետազոտությունները ցույց են տվել, որ ցիտիկոլինը ունակ է մեծացնել ուղեղի առաձգականությունը և վերականգնել այն նույնիսկ իշեմիայից մի քանի ժամանակ (Clark W.M., 2009; Overgaard K., 2014): Փորձարարական հետազոտությունում ՄՈՒՉԿ-ով հարուցված կաթվածից 24 ժամանակ 28 օրերի ընթացքում ցիտիկոլին ստացած կենդանիների մոտգրանցվել է շարժողական և ֆունկցիոնալ զգալի վերականգնում (Clark W.M., 2009):

Ցիտիկոլինի բազմակողմանի ազդեցությունը նյարդային համակարգի վրա պայմանավորված է նրա ազդեցության մեխանիզմների բազմազանությամբ, որոնք այնուամենայնիվ համարվում են դեռևս չհարգաբանված: Այսպես, դրա ազդեցության կարևորագույն մեխանիզմներից են համարվում բջջաթաղանթի վերականգնման համարանհրաժեշտ գլխուղեղում ֆոսֆոլիպիդների ռեսինթեզի խթանումը և դրանց քայքայման նվազեցումը (Grieb P., 2014)՝ ապահովելով թաղանթկայունացնող հատկությունը: Ցույց է տրված, որ ցիտիկոլինը նվազեցնում է ազատ

ճարպաթթուներն էր ի քանակությամբ (Wignall N.D. and Brown E.Sh., 2014): Բացի այդ, չափազանց կարևորվում է սուր իշեմիայի պայմաններում ցիտոկոլիսի ազատ ռադիկալներ կապելու հատկությունը՝ դանդաղեցնելով բջջի վնասումը (Rajah G.B. and Ding Y., 2017):

Ցիտոկոլիսը կարող է արագացնել վնասման ենթարկված նյարդային հյուսվածքի վերականգնումը՝ ներթափանցելով, սինապտոզները և անգիոգենեզը, ինչպես նաև ունակ է խթանելու նյարդափոխադրիչ ների կենսասինթեզը (Martynov M.Y. and Gusev E.I., 2015): Յետադոտոթյան փորձարարական մոդելում ցիտոկոլիսի կիրառման արդյունքում պենումբրայի շրջանում գրանցվել է սինապտոֆիզիկի՝ ‘ ‘ up-regulation’ ’, ինչը կարող է մատնանշել սինապտիկակտիվության մեծացում:

